ArmLur.am

I SSN 1829-2763

24122

9 771829 276006

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 սեպտեմբերի հինգշաբթի 2024

տպագրության ԺԳ տարի

122

(2972)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՈՒԻԳՄՈՐ» ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԽԱՅՏԱՌԱԿ ՊԱՏԿԵՐ Է

«Ուիգմոր» նորաբաց բժշկական կենտրոնին ՀՀ կառավարությունը 1.5 մլն դոլար է փոխանցել՝ առանց ռիսկերի փաստացի գնահատման: 2022 թվականի դեկտեմբեր ամսին Երեւան քաղաքում մեծ շուքով բացվեց «Ուիգմոր Գրուփ» ՓԲԸ-ի «Ուիգմոր կանանց եւ երեխաների հիվանդանոց» բժշկական կենտրոնը: Հիմնադրման օրվանից այս բժշկական կենտրոնի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք է դրսեւորում առողջապահության նախարարությունը՝շեփորահարելով այս կլինիկայի առավելությունների, բարձրակարգ լինելու մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ առանց նախնական հաշվարկներ անելու, առանց ռիսկերը փաստացի գնահատելու՝ առողջապահության նախարարությունը 2023 թվականի սկզբին 600 մլն դրամի պետական պատվերով ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել այս բժշկական կենտրոնի հետ: Որպես կանոն՝պետական պատվեր հիվանդանոցներին տրամադրվում է առնվազն մեկ տարի վճարովի սկզբունքով գործելուց հետո, որպեսզի հասկանալի լինի, թե ինչ որակի ծառայություն է մատուցում հիվանդանոցը: Այսօրինակ ֆինանսավորում, ինչպիսին արվել է «Ուիգմոր»-ի դեպքում, ՀՀ առողջապահության համակարգում երբեք չի արձանագրվել, լիազոր մարմինը՝ պետական պատվեր տեղադրողը, շատ ավելի զգուշավոր է եղել ֆինանսների տրամադրման գործում: Մշտապես սպասել են, դիտարկել նորաբաց կլինիկաների աշխատանքը եւ նոր սկսել ֆինանսավորել, այն էլ՝ «Ուիգմոր Գրուփ»-ին հատկացված գումարից 20-30 անգամ պակաս չափով: Բայց հանրության, առողջապահության կառավարիչների, տարիների փորձ ունեցող բժիշկների որոշակի շրջանակում ձեւավորվել է կարծիք, որ այս կլինիկան Հայաստանում առանձնահատուկ է, պայմանները, վերանորոգումը, կահավորումը, դիզայնը չունեն իրենց հավասարը, եւ որ մրցակցելը նրա հետ շատ դժվար է, առավել եւս, եթե հավելենք, որ ճանաչված շատ բժիշկների են հրավիրել աշխատելու «Ուիգմոր Գրուփ»-ում. սակայն իրականությունը ամենեւին էլ այդքան վարդագույն եւ կատարյալ չէ: Բուժայցելուներից ոմանք, լինելով ավելի ուշադիր, դիտարկել են, թե իրականում ինչ վիճակ է տիրում հիվանդանոցում, եւ անգամ ներկայացվող «գերազանց պայմաններից» «Ժողովուրդ» օրաթերթին փաստեր են ներկայացրել: Լուսանկարներում դուք կարող եք տեսնել, թե նոր վերանորոգված, գովազդված հիվանդանոցում ինչպիսի խայտառակ պայմաններ են. սանհանգույցի առաստաղը բաց է, մանկական հիվանդասենյակի սանհանգույցում էլեկտրական լարերը դուրս են եկել պատից ու հասանելի են երեխաներին: Հիվանդասենյակի մահճակալի վերեւի մասում եւս բաց լարերը հասանելի են երեխաներին...

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Սրբազան շարժման» առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը նախորդ շաբաթ հանդիպում է ունեցել ընդդիմադիր «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցությունների պատգամավորների հետ: Հանդիպմանը քննարկվել են ընդդիմադիր շարժման առաջիկա անելիքները, շարժման մարտավարության եւ սեպտեմբերի 22-ին կայանալիք հավաքի վերաբերյալ հարցերը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Հայկ Մամիջանյանը հաստատեց, որ հանդիպումը կայացել է. «Նման քննարկումներ պարբերաբար լինում են, դա էլ եղել է հերթական հանդիպումը, որեւէ արտառոց բան չկա», - «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց նա:



«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ ՔՊ-ական իշանության օրոք 10 հազար դրամով տուգանվել է համայն հայության հոգեւոր առաջնորդ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: Ամենեւին էական չէ՝ ինչի համար, էական չէ, թե որքան է կազմում տուգանքի գումարը, երեւույթն ինքնին տգեղ է, անընդունելի եւ վրեժխնդրություն հիշեցնող: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է փաստաթղթերը, որոնք վկայում են տուգանքի եւ դրա դեմ ներկայացված բողոքի մասին: Եվ այս անթույլատրելի երեւույթի դեմ պայքարի լավագույն ձեւը հավատավոր դառնալն ու մեր սուրբ եկեղեցու շուրջ համախմբվելն է:



Նիկոլ Փաշինյանը, երբ ասում էր, թե ոչ ոքի ձեռքից բիզնես չի խլվելու, նկատի ուներ՝ ոչ թե չի խլվելու, այլ այնպես է արվելու, որ տնտեսվարողը ստիպված իր բիզնեսի մի մասը նվիրի կառավարությանը: 2021 թ. սեպտեմբերի 30-ին հայտնի դարձավ, որ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ունի նոր բաժնետեր՝ռուս միլիարդատեր, կասկածելի կենսագրություն ունեցող Ռոման Տրոցենկոն: Պարզվեց, որ վերջինիս «Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերությունը, ձեռք է բերել Հայաստանի թիվ մեկ հարկատուի՝Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) բաժնետոմսերի 60%-ը ու շտապել ընդհանուր կապիտալի 15%-ը նվիրել ՀՀ վարչապետի աշխատակազմին: Տեղեկացնենք, որ 2023 թվականի վերջին միլիարդատեր գործարար Ռոման Տրոցենկոն իր բաժնետոմսերի 69%-ը վաճառել է AEON Infrastructure Corporation հոլդինգային խմբում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հայաստանյան բիզնես դաշտ մտնելուց հետո, Տրոցենկոյին պատկանող ընկերության բոլոր անուղղակի բաժնետոմսերն օտարվել են Սվետլանա Էրշովային: Մինչդեռ պարզ էր դարձել, որ Սվետլանա Էրշովան միշտ եղել է Ռոման Տրոցենկոյի կորպորացիաների անդամ՝ զբաղեցնելով ղեկավար պաշտոններ: Այսինքն՝ չի բացառվում, որ ձեւական գործարք է եղել: Թվում է, որ ամեն բան կարգին է, սակայն Հայաստանի խոշոր հարկատու ընկերությունը հայտնվել է ռուս մագնատի ձեռքում եւ Եվրամիության պատժամիջոցների ցանկում է. այս մասին հայտնում է ռուսական «Ինտերֆաքսը»: Իսկ ՀՀ իշխանությունը լայն քայլերով գնում է դեպի Արեւմուտք, Եվրամիություն: Հետաքրքիր է՝ այս պայմաններում արդյոք ՀՀ-ին ԵՄ-ում սպասո՞ւմ են:

ԶՐՈՒՅՑ

«ԻՇԽԱՆԱԿԱՆ ՌԵՊՐԵՍԻԱՆԵՐՆ ԻՆՁ ՉԵՆ ԿԱՇԿԱՆԴՈՒՄ»

Օրերս կայացել է ՀՊՏՀ ռեկտորի ընտրություն, որին մասնակցում էր նաեւ հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը, սակայն ՀՊՏՀ ռեկտոր է ընտրվել Արմեն Գրիգորյանը, ով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարն էր:

ArmLur.am-ի տաղավարում հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը նշել է, որ ամենեւին չի զարմանում կատարված ընտրությունից, ընդհակառակը՝ սպասելի էր, որ ինքը չի ընտրվելու:

Զրույցում Էդգար Ղազարյանի հետ նաեւ քննարկել ենք իր համար նախընտրելի այլ պաշտոններում առաջադրվելու, ընդդիմության փողոց դուրս գալու, սեպտեմբերի 22-ի հանրահավաքի եւ ընդդիմությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ հարցերը:

Ղազարյանի խոսքով՝ սեպտեմբերի 22-ի հանրահավաքից հետո շատ բան է փոխվելու եւ ընդդիմադիրները պետք է անվստահություն հայտնեն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

-Պարոն Ղազարյան, տեւական ժամանակ է, ինչ իշխանությունը համալսարանում թափուր պաշտոնների ընտրության համար ընտրում է իրենց կողմից ավելի հեշտ կառավարելի անձանց: Այս ամենն իմանալով եւ գիտակցելով՝ ինչո՞ւ եք դիմել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի թափուր հաստիքի համար:

-Իմ հիմնական մտադրությունն այն էր, որ իմ ընտրվելու պարագայում՝ փրկեի մեր համալսարանը կործանման վերահաս վտանգից, որովհետեւ Նիկոլ Փաշինյանը, որը չունի բարձրագույն կրթություն, բարդույթավորված է եւ ատելությամբ է լցված բոլոր համալսարանական կրթություն ստացած, գիտական աստիճան ունեցող մարդկանց նկատմամբ եւ ուզում է նրանց բոլորի վաստակն ու արժանիքները ջուրը գցել, ինչպես որ ջուրը գցեց բոլոր զինվորականների, դիվանագետների վաստակը. նա, լինելով կյանքում որեւէ հաջողության չհասած մարդ, որը չի էլ կարող հասնել որեւէ բանի, փորձում է այլ մարդկանց նմանեցնել իրեն: Հիմա Փաշինյանը արշավ է սկսել ամբողջ կրթական համակարգի դեմ: «Ակադեմիական քաղաք» կոչված անհիմն նախագծի անվան տակ մտադիր են փակել Հայաստանի բուհերը, եւ այդ հարվածի տակ է հայտնվել նաեւ տնտեսագիտական համալսարանն ու պարզ է, որ համալսարանի ռեկտորի հանգամանքը կարեւոր է՝ թե՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, թե՛ ուսանողության ջանքերը կոնսոլիդացնելու, դիմադրություն ցույց տալու առումով, եւ ես առաջադրվել էի, առաջին հերթին, մեր համալսարանն այդ վերահաս վտանգից փրկելու համար, եւ հետո՝ արդեն այն զարգացման տանելու նպատակներով: Ես, իհարկե, իրատեսորեն եմ գնահատել իրավիճակը, որ խորհրդի կազմում դժվար թե գտնվեր մեկը, ով կքվեարկեր իմ օգտին, թեպետ կարող էի լեգիտիմ ակնկալիք ունենալ, որ կլինեն մարդիկ, որոնք չեն ենթարկվի ճնշումների ու իրենց ցանկությամբ ընտրություն կկայացնեն: Այնուամենայնիվ, համալսարանի կառավարման խորհրդում այս քայլին գնացի նաեւ ցույց տալու համար Հանրապետության նախագահի եւ մի շարք այլ մարդկանց այնտեղ անօրեն կերպով գտնվելու հանգամանքը:

-Այդուհանդերձ, չկա՞ ինչ-որ պաշտոն, որի համար Դուք կառաջադրվեիք:

-Ես արդեն 2-րդ անգամն է, որ առաջադրվում եմ, բայց իմ առաջադրման ժամանակ ի սկզբանե գիտակցում եմ, որ այդ պաշտոնում իմ ընտրվելու հավանականությունը քիչ է: Հետեւաբար իմ առաջադրումը ոչ թե պաշտոնի հավակնություն է՝ առաջադրվել ընտրվելու մտադրությամբ, այլ պայքարի իմաստով եւ խորհրդով է: Երբ ես առաջադրվել էի Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու, շատ լավ հասկանում էի, որ այդ հանձնաժողովում, որտեղ պետք է նախնական քննարկում լիներ, նիստին ներկաներից Թագուհի Թովմասյանից բացի՝ չկար ուրիշ մեկը, որ կարող էր կողմ արտահայտվել կամ դրական վերաբերվել իմ առաջադրմանը, բայց ես, հասկանալով հանդերձ, գնացել եմ այդ քայլին, որպեսզի, թեկուզ այդ ճանապարհով պայքարեմ թշնամական խունտայի դեմ եւ պայքարեմ հանուն մարդու իրավունքների պաշտպանության: Այսինքն՝ իմ առաջադրումները նման դեպքերում պայքարի իմաստ ունեն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

«ՄԻՇՏ ԿԼԻՆԵՆ ՉՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՐՑԵՐ». ՓԱՇԻՆՅԱՆ

Այն, ինչ համաձայնեցված է, իսկ ֆունդամենտալ շատ կարեւոր դրույթներ համաձայնեցված են, ստորագրենք եւ գնանք առաջ:

Այդ մասին ԱԺ-Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ ասաց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով խաղաղության պայմանագրի վերաբերյալ հարցին:

«Եթե կանխավարկածն այն լինի, որ բոլոր կարեւոր հարցերը լուծենք, նոր ստորագրենք, նշանակում է, որ մենք երբեք չենք ստորագրի, որովհետեւ եթե եւս 4 կարեւոր հարցի շուրջ գանք համաձայնության, միեւնույնն է՝ կմնա էլի 4 կարեւոր հարց, որը կարիք կլինի համաձայնեցնելու. միշտ 4 հարց կլինի: Բոլոր երկրների հետ, որոնց հետ մենք հարաբերություններ ունենք երկարատեւ, կա 4, 5, 6, 15, 20 հարց, որը պետք է համաձայնեցնենք», - ասաց վարչապետը:

Նա նշեց, որ Հայաստանը չի առաջարկում 13 հոդվածանոց խաղաղության պայմանագիր:

«Մենք առաջարկում ենք 16 հոդվածանոց խաղաղության պայմանագիր: Մենք բոլոր 16 հոդվածների համար ունենք համաձայնեցված բովանդակություն, եւ 3 հոդվածի համար այդ բովանդակությունը մասամբ է համաձայնեցված, մնացածը՝ ամբողջությամբ, 13 + 3, այսինքն՝ 16 հոդվածով պայմանագիր»:

Խոսելով Ալմաթիի հռչակագրի մասին՝ Նիկոլ Փաշինյանն ասաց. «Մենք պետք է հղում տանք պաշտոնապես հայտարարված հաղորդագրություններին, եւ 2 երկրների սահմանազատման հանձնաժողովները տարածել են հայտարարություն, եթե չեմ սխալվում, միաժամանակ, որ Ալմաթիի հռչակագիրը դառնում է սահմանազատման գործընթացի բազային սկզբունք, եւ կողմերը սահմանազատման գործընթացում կառաջնորդվեն դրանով», - նշել է վարչապետը:

ԶԱԽԱՐՈՎԱՆ՝ ՌԴ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երեւի Ալեն Սիմոնյանն այնքան էլ ուշադիր չի հետեւել Նիկոլ Վովաեւիչի ասուլիսին», - այս մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով ԱԺ նախագահի հայտարարությունը, թե ՀՀ իշխանությունները պետք է մտածեն Թուրքիայի եւ Իրան հետ սահմանին ռուս սահմանապահներ տեղակայելու մասին:

«ՌԴ սահմանապահները բազմիցս ապացուցել են իրենց ներկայության կարեւորությունը: Արդյունավետ փոխգործակցություն է հաստատվել այս ուղղությամբ, ինչը, ըստ երեւույթին, նյարդայնացնում է Երեւանի որոշ քաղաքական գործիչների: Պետք է հաշվի առնել, թե ինչպես կանդրադառնա սահմանի բացահայտումը երկրի անվտանգության վրա տարածաշրջանում ամբողջական կարգավորման բացակայության պայմաններում: Ինձ թվում է՝ մարդիկ, ովքեր փորձագետ չեն, պետք է խոսքը տան նրանց, ովքեր իրենց կյանքն են դնում այդ ամենում», - ասել է Մարիա Զախարովան:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 215

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ ԿԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 3-ին՝ խորհրդարանական արտահերթ ընտրությունների քարոզարշավում Արարատ քաղաքում ունեցած ելույթի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Մեր երկրում այլեւս քաղբանտարկյալներ չեն լինելու. իսկ որպեսզի որեւէ մեկը քաղբանտարկյալ չհամարվի, անհրաժեշտ է, որ որեւէ մեկի նկատմամբ ապօրինություն տեղի չունենա, եւ որեւէ մեկը իրական չհիմնավորված հետապնդման չենթարկվի»:

Իրականում սակայն Հայաստանում քաղաքական բանտարկյալներ կան, կային եւ այդ ցանկը մշտապես «թարմացվում» է՝ համալրվելով նոր անուններով: Հայաստանում հարյուրավոր են մարդիկ, որոնք ընդդիմադիր հայացքներ ունեն եւ անգամ «ֆեյսբուք»-ում կարծիք գրելու համար խափանման տարբեր միջոցներով պատժվել են՝ կալանք, գրավ, ստորագրություն՝ չբացակայելու մասին, տնային կալանք եւ այլն: Հայաստանում, սակայն, տեղի է ունեցել աննախադեպը՝ քաղաքական բանտարկյալ Արմեն Գրիգորյանը մահացել է՝ բանտից դատարանի դահլիճ բերվելուց կարճ ժամանակ անց:

Մամիկոն Ասլանյանն ընտրվեց ամենաշատ ձայներով, կալանավորվեց իր համար նախատեսված պատժից էլ շատ ժամանակահատվածով:

Արմեն Աշոտյանը դասական քաղբանտարկյալ է, որի գործով ո՛չ տուժող կա, ո՛չ բողոքող, եւ որեւէ փաստաթուղթ Աշոտյանը չի ստորագրել, բայց կալանքի տակ է շուրջ 1 տարի է: Հայաստանում շատ է քաղհալածյալների թիվը, այն մարդկանց թիվը, որոնց պետական ապարատում աշհեռացնում են աշխատանքից՝ պարզապես ընդդիմադիր հայացքներ ունենալու համար, սոցցանցերում հակաիշխանական գրառումները հավանելու (Like) համար:

Ընդդիմադիր մի շարք հայտնի անձինք, հատկապես բուհերից՝ Երեւանի պետական համալսարան, Բրյուսով, Կառավարման ակադեմիա եւ այլ, կորցրել են իրենց աշխատանքը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՏՐԱՍՏ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարել է, որ պատրաստ է երկրորդ նախագահական ժամկետի համար առաջադրվել՝ Վրաստանը եվրոպական ճանապարհ վերադարձնելու համար: Այս մասին նախագահը հայտարարել է ֆրանսիական Le Figaro թերթին տված հարցազրույցում:

«Ես պատրաստ եմ ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել եւ առաջադրվել երկրորդ նախագահական ժամկետի համար՝ Վրաստանը եվրոպական ուղի վերադարձնելու համար», - ասել է նա:

Զուրաբիշվիլին գործող իշխանություններին մեղադրել է քաղաքական ուղղությունը եվրաինտեգրումից Ռուսաստանի հետ մերձեցման փոխելու մեջ:

«Այսօրվա վրացական կառավարությունը Մոսկվայի հետ մերձենալու շատ հստակ ընտրություն ունի: Այս կառավարությունը հրաժարվել է իր արեւմտամետ դիրքորոշումից՝ հօգուտ Մոսկվայի հետ հարաբերությունների», - նշել է նա:

ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեպտեմբերի 11-ի հերթական նիստում բավարարել է 51 քաղաքացիների դիմումը «Եվրոպայի միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջարկելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու վերաբերյալ: Նախաձեռնող խմբի լիազոր է նշանակվել Արտակ Հայկազի Ջեյնալյանը: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Հարցը զեկուցող ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը հայտնել է, որ նախաձեռնող խումբը ԿԸՀ է ներկայացրել «Հանրաքվեի մասին» օրենքով սահմանված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Նախագիծը հանրաքվեին ներկայացնելու համար անհրաժեշտ ստորագրությունների հավաքումն իրականացվում է ԿԸՀ-ի կողմից նախաձեռնող խմբին գրանցելուց հետո՝ 60 օրվա ընթացքում: Ստորագրությունների հավաքման ժամկետ է սահմանվել 2024 թվականի սեպտեմբերի 16-ից նոյեմբերի 14-ը ներառյալ ժամանակահատվածը:

Մեկ այլ որոշմամբ՝ հանձնաժողովը սահմանել է քաղաքացիական նախաձեռնության անդամի եւ քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցչի վկայականների ձեւը:

ԵՄ-ին Հայաստանի անդամակցության գործընթաց սկսելու հարցը հանրաքվեի դնելու համար ստորագրահավաքի առաջարկով հանդես են եկել երեք քաղաքական ուժեր՝ Հայաստանի Եվրոպական կուսակցությունը, Հանրապետություն կուսակցությունը, Հանուն Հանրապետության կուսակցությունը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԵՐՔԵՐԸ ԴԵՌ ԹԱՑ ԵՆ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ 23 ՏԱՐԻ Է ԱՆՑԵԼ

2001 թվականի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցավ պատմության մեջ ամենամեծ ահաբեկչությունը: 23 տարի է անցել, բայց Ամերիկայի վերքերը դեռ թաց են:

2001 թվականի սեպտեմբերի 11-ին Ալ-Քաիդայի ահաբեկիչները Ուսամա բեն Լադենի գլխավորությամբ առեւանգեցին չորս մարդատար ինքնաթիռ եւ օգտագործեցին ինքնաթիռները որպես կառավարվող ռումբեր՝ Նյու Յորքի եւ Վաշինգտոնի վրա հարձակվելու համար: Աննախադեպ հարձակումների հետեւանքով զոհվել է գրեթե երեք հազար մարդ:

Հենց դրանից հետո Միացյալ Նահանգները սկսեց, այսպես կոչված, «ահաբեկչության դեմ պատերազմը», որի ընթացքում ներխուժեց Աֆղանստան եւ Իրաք:

Ամերիկացիների մի ամբողջ սերունդ հստակ հիշում է, թե որտեղ էին եւ ինչ էին անում, երբ լսեցին այդ օրը հարձակումների մասին:

Ի՞նչ թիրախներ են խոցվել

Ինքնասպան առեւանգողների փոքր խմբերը միաժամանակ չորս մարդատար ինքնաթիռներ են առեւանգել ԱՄՆ-ի արեւելյան ափի օդում:

Երկու ինքնաթիռներ բախվել են Նյու Յորքի Առեւտրի համաշխարհային կենտրոնի զույգ աշտարակներին: Առաջինը մխրճվել է Հյուսիսային աշտարակի մեջ տեղական ժամանակով առավոտյան 08:46-ին: Երկրորդը Հարավային աշտարակի մեջ է մխրճվել ժամը 09:03-ին:

Աշտարակներում հրդեհ է բռնկվել՝ վերին հարկերում գտնվող մարդկանց փախուստի ճանապարհը փակելով: Երկու ժամ չանցած՝ երկու 110 հարկանի երկնաքերերն էլ փլուզվեցին:

Առավոտյան ժամը 09:37-ին երրորդ ինքնաթիռը մխրճվել է Պենտագոնի արեւմտյան ճակատին՝ մայրաքաղաք Վաշինգտոնի մոտակայքում գտնվող ԱՄՆ պաշտպանության նախարարության հսկայական շենքի մեջ:

Չորրորդ ինքնաթիռում ուղեւորները դիմադրել են առեւանգողներին, իսկ ժամը 10:03-ին այն բախվել է Փենսիլվանիայի դաշտին: Ենթադրվում է, որ այս ինքնաթիռը պետք է խոցեր Վաշինգտոնի Կապիտոլիումի շենքը:

Որքա՞ն մարդ է տուժել

Զոհվել է 2977 մարդ (չհաշված 19 առեւանգողները), որոնց մեծ մասը զոհվել էին Նյու Յորքի երկվորյակ աշտարակներում:

Չորս ինքնաթիռում ընդհանուր առմամբ եղել է 246 ուղեւոր եւ անձնակազմի անդամ: Բոլորը մահացել են:

Երկվորյակ աշտարակներում 2606 մարդ մահացել է ակնթարթորեն կամ մահացել է վերքերից:

Պենտագոնի շենքում մահացել է 125 մարդ. մահացածներից ամենաերիտասարդը երկու տարեկան Քրիստին Լի Հանսոնն էր, ով ինքնաթիռներից մեկում էր հոր եւ մոր՝ Փիթերի եւ Սյուի հետ:

Ամենատարեցը 82-ամյա Ռոբերտ Նորթոնն էր. նա եւ նրա կինը՝ Ժակլինը, նույնպես եղել են ինքնաթիռներից մեկի ուղեւորները:

Շենքերին բախվելու պահին Առեւտրի համաշխարհային կենտրոնի աշտարակների ներսում մոտավորապես 17,400 մարդ կար: Հյուսիսային աշտարակում հարվածի վայրից բարձր հարկերում գտնվողներից ոչ մեկը չի փրկվել: Հարավային աշտարակում 18 մարդ կարողացել է փախչել հարվածի վայրից բարձր հարկերից:

Մահացածների թվում կան 77 երկրների քաղաքացիներ: Նյու Յորք քաղաքը կորցրել է 441 փրկարար աշտարակների փլուզման հետեւանքով:

Հարձակման հետեւանքով հազարավոր մարդիկ վիրավորվել են:

Ովքե՞ր էին ահաբեկչության կազմակերպիչները

Աֆղանստանում գտնվելու ժամանակ ակցիան պլանավորվել էր իսլամական ծայրահեղականների՝ Ալ-Քաիդա ցանցային կազմակերպության ղեկավարների կողմից: Այդ ժամանակ Աֆղանստանը գտնվում էր թալիբների վերահսկողության տակ (Ալ-Քաիդան եւ Թալիբանը ճանաչված են որպես ահաբեկչական կազմակերպություններ եւ արգելված են Ռուսաստանում):

Ուսամա բեն Լադենի գլխավորած Ալ-Քաիդան մեղադրել է ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին իսլամական աշխարհում հակամարտություններ հրահրելու մեջ:

Անմիջական կատարողները 19-ն էին՝ երեք խումբ հինգ հոգուց եւ մեկ խումբ չորս հոգուց (Փենսիլվանիայում վթարի ենթարկված ինքնաթիռի վրա):

Յուրաքանչյուր խումբ ուներ մի մարդ, որը գիտեր, թե ինչպես վարել ինքնաթիռ: Նրանք բոլորն էլ վերապատրաստման դասընթացներ են անցել ԱՄՆ-ի մասնավոր թռիչքային դպրոցներում:

19 հանցագործներից 15-ը սաուդցիներ էին, երկուսը Արաբական Միացյալ Էմիրություններից էին՝ մեկը Եգիպտոսից, մյուսը Լիբանանից:

Սեպտեմբերի 11-ից հետո ամբողջ աշխարհում օդային անվտանգության կանոնակարգերը խստացվել են:

Երկվորյակ աշտարակների տեղում փլատակների մաքրման համար պահանջվել է ութ ամիս: Արդեն 2006-2013 թվականներին այնտեղ կառուցվել է Առեւտրի համաշխարհային կենտրոնի նոր աշտարակ, որը շատ ավելի բարձր է, քան զույգ աշտարակները (541-ը՝ 415 մետրի փոխարեն) եւ այժմ ամենաբարձր շենքն է ԱՄՆ-ում:

Բացի այդ այս վայրում կառուցվել է հուշահամալիր եւ թանգարան:

Պենտագոնի ավերված հատվածի վերականգնումը տեւել է ընդամենը մեկ տարի:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

«Երեւանյան երկխոսություն» միջազգային ֆորումի շրջանակում Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է Հնդկաստանի ԱԳ նախարարի տեղակալ Կիրտի Վարդհան Սինգհին: Այս մասին հայտնում են ՀՀ արտաքին գործերի նախարարությունից:

Զրուցակիցները գոհունակությամբ արձանագրել են, որ Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ երկկողմ համագործակցությունը զարգանում է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում՝ պատրաստակամություն հայտնելով շարունակել համատեղ ջանքերը երկկողմ օրակարգի հետագա ընդլայնման ուղղությամբ: Անդրադարձ է կատարվել նաեւ տարբեր հարթակներում եւ ձեւաչափերով փոխգործակցության հնարավորություններին: Արարատ Միրզոյանը եւ Կիրտի Վարդհան Սինգհը մտքեր են փոխանակել տարածաշրջանային հարցերի շուրջ: Նախարար Միրզոյանն ընդգծել է, որ ՀՀ տեսլականը Հարավային Կովկասում կայունության ու խաղաղության հասնելու հարցում հստակ է, այն հիմնված է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների անվերապահ հարգման եւ տարածաշրջանում տնտեսական զարգացման, արդյունավետ փոխկապակցվածության ապահովման հաստատուն հանձնառության վրա: Այս համատեքստում նախարար Միրզոյանը ներկայացրել է տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակման ուղղությամբ իրականացվող քայլերը:

ԱԺ ԲԱՑՕԹՅԱ ՍՐՃԱՐԱՆՆ ԱՐԴԵՆ ԳՈՐԾՈՒՄ Է

Այսուհետ Ազգային ժողովի պատգամավորներն ու աշխատակիցներն իրենց ազատ ժամանակը կարող են անցկացնել ԱԺ նորաբաց սրճարանում:

Խորհրդարանի շենքի բակում՝ ծառերի տակ, օրեր առաջ իր դռներն էր բացել Ազգային ժողովի բացօթյա սրճարանը, որը կառուցվում էր դեռեւս 2022 թվականից՝ ԱԺ նախագահի նախաձեռնությամբ:

Նոր սրճարանի կառուցման համար Ազգային ժողովը շուրջ 11,5 մլն դրամ էր հատկացրել:

Երեկ սրճարան են այցելել նաեւ Նիկոլ Փաշինյանն ու Ալեն Սիմոնյանը:

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՃԱՌՈՂՆ ՕՐԱԿԱՆ 20-50 ՓԱԹԵԹ Է ԳՆԵԼ

2024 թ. սեպտեմբերի 4-ին Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկները ժամը 14:35-ի սահմաններում ծառայողական ավտոմեքենայով Գրիբոյեդովի փողոցում նկատել են քաղաքացու, ում ձեռքի մեջ երեւացել է կապույտ գույնի կոչուն ժապավենով փաթեթավորված 2 փաթեթ:

Վերջինս, ապօրինի թմրանյութ պահելու, օգտագործելու, իրացնելու կասկածով տեղափոխվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արաբկիրի բաժին: Պարզվել է, որ վերջինս Երեւան քաղաքի բնակիչ է՝ 35 տարեկան:

Անձնական խուզարկությամբ նրա կիսատաբատի գրպանից հայտնաբերվել է կապույտ գույնի կպչուն ժապավենով փաթեթավորված 2 փաթեթ, որոնց մեջ առկա է եղել 7.56 գրամ նախնական քաշով բուսական զանգված՝ յուրահատուկ հոտով:

Պարզվել է, որ 35-ամյա երիտասարդը սույն թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, տելեգրամյան ալիքից պատվիրել է 110 փաթեթ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որի մի մասը, իրացնելու նպատակով, տեղադրել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ տարբեր վայրերում:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի եւ 396-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով 35-ամյա տղամարդը ձերբակալվել է:

Նախաքննության ընթացքում կատարված քննչական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վերջինս դեռեւս 2024 թ. հուլիսի 20-ից 100 ԱՄՆ դոլար դեպոզիտ գումար մուտքագրելով տելեգրամյան նույն կայքէջի միջոցով իրեն փոխանցված հաշվեհամարին՝ ամենօրյա ռեժիմով սկսել է ձեռք բերել օրական շուրջ 20-50 փաթեթ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որոնք տեղադրել է Երեւան քաղաքի Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն եւ Ավան վարչական շրջանների բազմաթիվ վայրերում:

Միայն սեպտեմբերի 3-ին եւ 4-ին նա Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն եւ Արաբկիր վարչական շրջաններում տեղադրել է ընդհանուր 154 փաթեթ թմրամիջոց, ապա լուսանկարել դրանց գտնվելու վայրերը եւ կոորդինատներն ուղարկել տելեգրամյան նշված կայք-էջին՝ յուրաքանչյուր փաթեթի դիմաց 7 դոլար գումար ստանալու պայմանով: Ըստ ստացված տվյալների՝ գումարները փոխանցվում են՝ փոխակերպվելով կրիպտոարժույթներով:

Երիտասարդը պարեկների կողմից կանգնեցվել եւ ձերբակալվել է թմրամիջոցների տեղադրման վայրերի լուսանկարները տելեգրամյան կայքի օգտատիրոջն ուղարկելու ընթացքում:

Վերջինիս մասնակցությամբ կատարվել է համապատասխան քննչական գործողություն, որի ընթացքում Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների մի շարք վայրերից հայտնաբերվել են 13 փաթեթ թմրամիջոցի նմանվող զանգվածներ:

Նախաքննության ընթացքում նշանակված դատաքիմիական փորձաքննության նախնական արդյունքների համաձայն՝ անձի մոտ հայտնաբերված ու փորձաքննության ներկայացված փաթեթներում առկա զանգվածը «մարիխուանա» տեսակի թմրամիջոց է:

Ձեռք բերված փաստերի հիման վրա 35-ամյա անձի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման համար, հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան ներկայացվել է մեղադրանք: Միջնորդություն է հարուցվել դատարան՝ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Ք. Մ.

ԿՈՂՄԵՐԻՑ ՄԻՆ Է ՄԵՂԱՎՈՐԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՉԻ ԻՐԱՔԵԿՎԵԼ, ՈՐ ՏՈՒԳԱՆՎԱԾ Է

Թոռակառու, 65-ամյա Աշոտ Դարբինյանն ArmLur.am-ի խմբագրություն է ահազանգել, որ 2022 թվականին Վաղարշյան փողոցում վթար է տեղի ունեցել՝ Opel մակնիշի եւ իր վարած՝ Երեւանի Կանաչապատման եւ շրջակա միջավայրի պահպանության ՀՈԱԿ-ին պատկանող բեռնատարներից մեկի միջեւ:

-ԱՊՊԱ»-ն եկել է, գրանցել է, տվել են փաստաթղթեր, որ մեղավոր չեմ, որոնք ստորագրեցի ու գնացինք,- պատմում է նա:

Նրա խոսքով՝ երբ գնացել է աշխատավարձ ստանալու, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն արդեն կալանք է դրել գումարի վրա. նրանից պահանջել են 200.000 դրամ:

Երբ Աշոտ Դարբինյանը դիմել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ-ին՝ հասկանալու, թե ինչն է կալանքի պատճառը, աշխատակիցը ասել է, որ նա պետք է հատուցի գումարը:

Պարզվում է, որ այդ ընթացքում եղել է դատավարություն եւ մեղավոր են ճանաչվել երկու կողմերն էլ, որի մասին չի տեղեկացվել Աշոտ Դարբինյանը:

«2022 թվականից մեղավոր չեմ, նո՞ր դարձա մեղավոր: Թղթերում գրել են, որ պետական մեքենան ապահովագրված չէ, ես վարորդական իրավունք չունեմ. դրանք բացառապես ստեր են: Ես քաղաքապետարանից աշխատավարձ եմ ստանում, ո՞նց կլինի՝ վկայական չունենամ»:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերությունը հայց է ներկայացրել ընդդեմ Աշոտ Դարբինյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին:

ArmLur.am-ը կապ հաստատեց Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մամուլի քարտուղար Վարդուհի Պետրոսյանի հետ՝ գործի մասին մանրամասներ իմանալու նպատակով, վերջինս ասաց, որ վարույթը նոր է իրենց մոտ հարուցվել՝ 2024 թվականի սեպտեմբերի 4-ին, եւ պահանջատերը «Նաիրի Ինշուրանս»-ն է:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 10-ից 11-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 86 դեպք, որոնցից 1-ը եղել է նախկինում կատարված:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու 17 դեպք, զորակոչից խուսափելու 11, թմրանյութի հայտնաբերման 7, ֆիզիկական ներգործության 6, փողերի լվացման 5, խարդախության 4, մարմնական վնասվածք պատճառելու, անձնական ունեցվածքի գողության, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության եւ փաստաթղթի կեղծիքի՝ 3-ական դեպք, հոգեկան ներգործության, շորթման ու գույքը ոչնչացնելու կամ վնասելու՝ 2-ական դեպք, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, վստահված գույքը հափշտակելու, խուլիգանության, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, թմրանյութի իրացման, վտանգի մեջ թողնելու, աշխատանքների պաշտպանության կանոնները կամ պահանջները խախտելու, անհետաձգելի միջամտության մասին որոշումը խախտելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, աշխատանքի պաշտպանության կանոնները կամ պահանջները խախտելու, տրանսպորտային միջոցի նույնականացման համարը կեղծելու կամ ջնջելու, կեղծ ապացույցներ ներկայացնելու, հողը փչացնելու, շրջանառությունն արգելված, բույսեր ցանելու կամ աճեցնելու, պետական սահմանն ապօրինի հատելու, ինքնիրավչության եւ աշխատանքներ իրականացնելիս շրջակա միջավայրի պահպանության օրենսդրության պահանջները խախտելու՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է սպանության 1 դեպք:

Կամավոր ներկայացել է 2 հետախուզվող:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 2 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար, 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 10-ից 11-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 86 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՈՂԱՄԱ՞Ս Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Դիլիջան համայնքում տարածված խոսակցությունների համաձայն՝ Թեղուտ գյուղից դեպի Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհի եզրին գտնվող ամենամեծ, հարթ հողամասը ձեռք է բերել Նիկոլ Փաշինյանը: Տեղացիներն ասում են՝ նախկինում այդ հողամասը, որին տեղացիները թախտա՝ այսինքն՝ հարթ տարածք են կոչում, երկարաժամկետ վարձակալության իրավունքով տիրել է Դիլիջանի քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, որն այն օտարել է մասնավոր անձի: Հենց այդ մասնավոր անձից է ձեռք է բերել Նիկոլ Փաշինյանը: Հայտնի չէ՝ հողամասն այժմ գրանցված է Նիկոլ Փաշինյանի կամ իր ընտանիքի անդամներից մեկի՞ անունով, թե՞ այլ անձի: Հաղարծին վանական համալիր տանող բարեկարգ ճանապարհի եզրին գտնվող մեծ, հարթ հողամասի շուկայական գինը կարող է լինել մի քանի հարյուր հազար դոլարին համարժեք դրամ:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԸ ԿԱԶԱՏՎԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից հայտնում են՝ դպրոցներում ստացվել է պաշտոնական գրություն, որ դպրոցներում միասնական ձեւով կիրականացվեն մասնագիտացված ընկերությունները: Ըստ այդմ՝ 2025 թվականի հունվարից դպրոցների հաշվապահները կազատվեն աշխատանքից: Երեւի նաեւ այդ նկատի ուներ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, երբ հայտարարում էր, որ դպրոցը աշխատատեղ չէ: Կառավարությունում, մարզպետարաններում խորհրդականների, օգնականների եւ բազում այլ ավելորդ, ուռճացած հաստիքներ կան, մարզպետարանները տվյալ մարզում ընդամենը 2 ոլորտ՝ հանրակրթություն եւ առողջապահություն են ղեկավարում՝ համապատասխան նախարարությունների հետ համատեղ, փոքր Հայաստանի մարզերում կրկնում են կառավարության աշխատանքը, դա Նիկոլ Փաշինյանին չի մտահոգում:

ԲԱՆՈՒԿ ՓՈՂՈՑԸ՝ ԱՌԱՆՑ ՄԱՅԹԵՐԻ

Տուրիստական Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովա փողոցը շատ բանուկ է: Այն տանում է դեպի «Իմպուլս» գործարանի մեծ թաղամաս: Փողոցը մայթեր չունի, ամեն պահ հետիոտները կարող են հայտնվել երթեւեկող ավտոմեքենաների տակ: Տարբեր բույսերով պատված, չմաքրված փողոցի եզրը քանդված վիճակում է: Դիլիջանի համայնքապետարանը հարյուրավոր հողամասեր է օտարել, սակայն դրանց վաճառքից գոյացած, համայնքի բյուջե մտած մեծ գումարները չի ծախսել՝ զբոսաշրջային համբավ ունեցող Դիլիջան քաղաքի բանուկ փողոցի բարեկարգման, մայթեր կառուցելու նպատակով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԳՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

18 ՄԼՆ ԵԿԱՄՈՒՏ, 34 ՀԱՋ. ԴՈԼԱՐ ԿԱՆԽԻԿ ԳՈՒՄԱՐ

Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի փոխնախարար Արփինե Սարգսյանը պաշտոնի նշանակվել է 2023 թվականի հունվարի 9-ին:

Արփինե Սարգսյանը, մինչ ՆԳՆ գալը՝ 2015 թվականից սկսած, աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում սկզբում որպես ՀՀ ԱՆ աշխատակազմի օրենսդրության զարգացման եւ իրավական վերլուծությունների վարչության քրեաիրավական օրենսդրության բաժնի փորձագետ, իսկ վերջին տարիներին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Համաձայն Սարգսյանի՝ 2024 թվականին ներկայացված 2023 թվականի հաշվետու տարվա անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի՝ այս տարիների ընթացքում փոխնախարարը որեւէ անշարժ գույք չի հայտարարագրել:

Որպես շարժական գույք՝ տրանսպորտային միջոց, փոխնախարարը հայտարարագրել է 2014 թվականին ձեռք բերված 2007 թվականի Toyota մակնիշի մեքենա:

Փոխնախարարի բանկային ավանդները կազմել են 16 մլն դրամ, բանկային հաշիվների մնացորդը՝ 2,6 մլն դրամ եւ 1 հազար 200 դոլար:

Արփինե Սարգսյանը հայտարարագրել է 500 եվրո, 1,5 մլն դրամ եւ 34 հազար դոլար կանխիկ դրամական միջոց:

Փոխնախարարի՝ հաշվետու տարվա եկամուտը 2023 թվականին կազմել է 18 մլն 651 հազար դրամ:

Սարգսյանի՝ պաշտոնը ստանձնելուց օրեր անց «Ժողովուրդ» օրաթերթը գրեց, որ ՆԳՆ նախարարի տեղակալի հայրը 455 հազար դոլար հափշտակելու մեղադրանքով կալանավորված է եղել:

Դեռ 2014 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՊՆ նախկին մատակարար Աշոտ Սարգսյանը, որը հայտնի է նաեւ որպես «վեդեցի Տոզդոյի Աշոտ», ՊՆ-ին ապահովել է վիդեոկոնֆերանսի սրահների տեխնիկայով: Մատակարարելուց հետո պարզվել էր, որ տեխնիկան ՊՆ-ին վաճառվել է շուկայականից շատ ավելի բարձր գնով:

Նրա գլխավորած «ԱՍ-Թէչ անվտանգության համակարգեր» ընկերությունը գործում էր 2005 թվականից եւ հիմնականում ծառայություններ էր մատուցել պետական եւ հանրային կառույցներին՝ նրանց շենքերը կահավորելով համապատասխան սարքավորումներով: Այս ընկերությունը տեխնիկայով է ապահովել մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, դատարանների շենքերը: Ըստ այդ ժամանակ առկա տեղեկությունների՝ Աշոտ Սարգսյանը վիդեոկոնֆերանսների սրահի սպասարկման համար հափշտակել էր շուրջ 455 հազար ԱՄՆ դոլար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՂԵՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ի՞ՆՉՆ ԷՐ ՁՈՒԼԱՐԱՆԻ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՊԱՏՃԱՌԸ

2024 թվականի սեպտեմբերի 10-ին՝ երեկոյան, ահազանգ է ստացվել այն մասին, որ «Հրազդան ՋԷԿ»-ի տարածքի ձուլարանում պայթյուն է տեղի ունեցել եւ կան տուժածներ:



Ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում նախնական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2024թ. սեպտեմբերի 10-ին՝ ժամը 16:45-ի սահմաններում, «Հրազդան ՋԷԿ»-ի հարակից տարածքի մետաղաձուլարանում տեղի է ունեցել օդի տարայի պայթյուն, որի հետեւանքով կան մարմնական վնասվածքներ ստացած 6 անձ, ովքեր տվյալ օբյեկտը շահագործող ընկերության աշխատակիցներն են եւ տեղափոխվել են բժշկական կենտրոն: Հիշյալ անձանցից մեկը՝ Հրազդան քաղաքի 46-ամյա բնակիչը, գիտակցության չգալով, բժշկական կենտրոնում մահացել է: Այս մասին հաղորդում են քննչական կոմիտեից:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին:

Նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն:

Վերոնշյալ 6 անձինք ճանաչվել են տուժող: Տուժողներից երկուսը հարցաքննվել են, իսկ մյուս երեք անձանց հետ անհրաժեշտ քննչական գործողություն հնարավոր չի եղել կատարել առողջական վիճակի պատճառով:

Նշանակվել են դիակի դատաբժշկական փորձաքննություններ, դատապայթունատեխնոլոգիական եւ դատահետքաբանական համալիր փորձաքննություններ:

Նախաքննությունը շարունակվում է: Կատարվում են անհրաժեշտ անհետաձգելի քննչական եւ վարութային գործողությունները՝ դեպքի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ պայթյունի պատճառները, տվյալ օբյեկտում անվտանգության ապահովման սահմանված պահանջների պահպանվածության վիճակը պարզելու ուղղությամբ:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հիշեցնենք, որ ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ սեպտեմբերի 10-ին Կոտայքի մարզում «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի չգործող ձուլարանում տեղի էր ունեցել պայթյուն. պայթել էր օդի մեծ տարան, որը վերանորոգումից հետո ցանկացել էին փորձարկել: Դրա հետեւանքով վիրավորում է ստացել 1 տասնյակից ավելի մարդ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ տուժածների վիճակը գնահատվում է միջին ծանրության: Հրազդան բժշկական կենտրոնից դեռեւս դուրս գրվածներ չկան:

ՀՀ Առողջապահության նախարարությունից մեզ հայտնել են, որ «Հրազդան» ՋԷԿ-ում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով 5 տուժածներից մեկի վիճակը ծայրահեղ ծանր է, 4-ի առողջական վիճակը գնահատվում է միջին ծանրության:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար, 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանում «Տոտեմ Բիզնես Կենտրոն» ՓԲԸ-ի 0.5472 հա սեփական հողատարածքի ոռոգման համար ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 1.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 17-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն եւ ML Mining ընկերությունը կխաղարկեն 400 բնակարան «Ավան Թաուերս» համալիրից բացառիկ արժեքով՝ 427 000 ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

«Ավան Թաուերս»-ի շինարարությունն իրականացվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, «Արդշինբանկ»-ի եւ ML Mining ընկերության կողմից ստորագրված եռակողմ հուշագրով: Ծրագիրը նախատեսված է հանրային ծառայողներին մատչելի բնակարաններ տրամադրելու համար: Հաշվի առնելով բազմաթիվ դիմումները՝ վիճակահանությանը արդեն կարող են հայտ ներկայացնել ոչ միայն հանրային ծառայողները, այլեւ «Արդշինբանկ»-ի ցանկացած հաճախորդ՝ անկախ իր գործունեության ոլորտից: Բացի այդ, այս համագործակցության շրջանակում բնակարաններ կկարողանան ձեռք բերել նաեւ ոչ ռեզիդենտները, նաեւ արտասահմանում ապրող մեր հայրենակիցները:

Իր հաճախորդների համար առավել հարմարավետ գործընթաց ապահովելու համար «Արդշինբանկ»-ը պարզեցրել է հիպոթեքային վարկավորմանը դիմելու պայմանները. 20% կանխավճարի դեպքում եկամուտների վերլուծություն չի իրականացվի, իսկ բոլոր հաղթողները կստանան Gold քարտ՝ 1 տարի անվճար սպասարկմամբ:

«Արդշինբանկ»-ի կորպորատիվ բիզնեսի տնօրեն Արմեն Գասպարյանն իր խոսքում նշեց. «Բանկը մեծ ներդրում ունի մեր երկրի տնտեսության զարգացման գործում, ինչը պայմանավորված է նաեւ խոշոր ծրագրերի իրականացմամբ շինարարության ոլորտում»:

ԲՈՂՈՔ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՆՈՒՂՂԱԿԻ ԿԵՐՊՈՎ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ArmLur.am-ը նկատեց, որ սեպտեմբերի 1-ից՝ գիտելիքի օրվա մեկնարկից հետո, համացանցում թեժ քննարկումների կենտրոնում է դպրոցական զրուցարանների (չատերի) հարցը:

Բողոքը հիմնականում ծնողների կողմից է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ գրեթե բոլոր դասարաններում դպրոցական բոլոր առարկաների համար ուսուցիչները առանձին-առանձին զրուցարաններ (չատ) են բացում, որպեսզի ծնողներին տեղեկացնեն հանձնարարված առաջադրանքների մասին, երեխաների վարքի եւ առաջադիմության մասին:

Ինչի՞ հետ է կապված դժգոհության ալիքը. ուսուցիչները հանձնարարություններ տալիս չեն տեղեկացնում աշակերտներին, որ տեղում իմանան իրենց անելիքները, այլ միանգամից հանձնարարվելիք առաջադրանքները նկարում եւ ուղարկում են արդեն իսկ բացված Viber-ի կամ այլ հավելվածներով բացված զրուցարաններում. սակայն այս ամենը չի ավարտվում հանձնարարությունների մասին տեղյակ պահելով: Բանն այն է, որ ուսուցիչները ընդհանուր խմբերում բոլորի ներկայությամբ գրում են երեխաներից որեւէ մեկի վարքի մասին, որը ավելորդ անգամ սթրես եւ անհանգստություն է պատճառում: Այս ամենին զուգահեռ աշակերտները առանձնապես ուշադրություն չեն սեւեռում իրենց հանձնարարված առաջադրանքներին, քանի որ ծնողներին արդեն ուսուցիչներն ամեն ինչի մասին տեղեկացնում են:

ArmLur.am-ին ահազանգած ծնողներից մեկի խոսքով՝ գրեթե բոլոր խմբերում տեղադրվում են գրատախտակների վրա գրված հանձնարարությունները, երեխայի չպատասխանած դասերը եւ ստացած անբավարար գնահատականները, որը, ինչպես նշեցինք, տհաճություն է պատճառում ծնողներին, քանի որ բոլորը տեղեկանում են իրենց երեխայի վարքի եւ ստացած գնահատականների մասին: Սոցիալական ցանցերում այս ամենը բավականին թեժ քննարկումների կիզակետում է հայտնվել, եւ բոլորին ապշեցնում է մեկ բան՝ ինչո՞ւ եկանք այս ամենին, քանի որ «հին ու բարի օրերում» այս ամենը գրի էր առնվում աշակերտների համար նախատեսված օրագրերում, որոնց մեջ աշակերտները նույնպես նշումներ էին կատարում եւ գիտեին իրենց անելիքների մասին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

Ես՝ Անի Հրաչյայի Պողոսյանս, Արաբկիր վարչական շրջանում կորցրել եմ Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջի կողմից ստացած դիպլոմս:

Գտնողին խնդրում եմ զանգահարել 096 910 990 հեռախոսահամարով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Արարատի մարզ, համայնք Այնթապ, 2-րդ շարք, 79 հասցեում գտնվող 181.3 ք.մ. բնակելի տուն, 6.3 ք.մ. լողարան, 1.7 ք.մ. կաթսայատուն եւ 0.0414 հա հողամաս:

Լոտի մեկնարկային գինը՝ 29850000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 30.09.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.10.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիէսԹի» ՍՊԸ -ի դրամարկղում աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆ

ՆՎԻՐՎԱԾ ԿԼԻՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 110-ԱՄՅԱԿԻՆ

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը 93-րդ նոր թատերաշրջանի մեկնարկը կտա սեպտեմբերի 13-ին: Թատերաշրջանը կնվիրվի ՀՀ ժողովրդական արտիստ Սուրեն Հովհաննիսյանի 110-ամյակին:

Ինչպես հաղորդում են թատրոնից՝ թատերաշրջանը կմեկնարկի Հովհաննես Թումանյանի «Անուշ» ներկայացմամբ, որի բեմադրիչը ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանն էր:

Թատերաշրջանի առաջին պրեմիերան սեպտեմբերի 25-ին է: Բեմ կբարձրանա Եվգենի Շվարցի «Վիշապը» քաղաքական սատիրան, Ինգա Շահբազյանի բեմադրությամբ, բեմանկարչությունը եւ զգեստների ձեւավորումը Քրիստինե Վարդանյանին են, լուսային ձեւավորումը՝ Աշոտ Գեւորգյանինը, երաժշտությունը՝ Դավիթ Դավթյանինը իսկ երգի հեղինակն է «Բամբիռ» ռոք խումբը:

Դերերում՝ Արման Կոլոսով, Արման Սաքանյան, Մարիամ Ղեւոնդյան, Արման Մաթեւոսյան, Համլետ Գյուլզադյան, Էդգար Բարսեղյան, Արթուր Պապիկյան, Մարինե Պետրոսյան, Անի Աբրահամյան, Արփինե Հակոբյան, Վահե Սիմոնյան, Սարգիս Ալեքյան, Վազգեն Բադալյան:

Ներկայացման հիմքում Վիշապի մասին հեքիաթային պատմությունն է, որը հորինել է ժողովուրդը: Ըստ պատմության՝ վիշապին հաղթելն անհնար է, որովհետեւ հաղթողն ինքը վիշապ է դառնում, եւ միայն մաքուր սրտով մարդն է կարող սպանել վիշապին: Այստեղ հերոսներին ազատություն բնավ պետք չէ: Նրանք ուզում են ստրուկ լինել, միայն թե տերը նրանց հետ կոպիտ չվարվի: Մարդուն ազատ դարձնելու համար վիշապին սպանելը բավարար չէ:

Մինչեւ տարեվերջ թատրոնը նախատեսում է հյուրախաղեր Երեւանում եւ Թբիլիսիում: Սկսված են նոր ներկայացման փորձերը: Այն հեքիաթ է մեծահասակների համար:

Հ. Բ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է «ՏԱՔՍԻ» ՖԻԼՄԻ ԱՍՏՂԸ

«Տաքսի» սիրված ֆիլմի աստղը՝ Սամի Նասերին, որը նկարահանվելու է Kinodaran-ի «Սուրբը 2» սերիալում, ժամանել է Երեւան:

Հաղորդվում է՝ «Սուրբը 2» սպասված սերիալի մեկնարկին հաշված օրեր են մնացել. նախագծի երկրորդ եթերաշրջանի մեկնարկը տրվելու է սեպտեմբերի 13-ին:

««Սուրբը 2»-ը հերթական քրեական սերիալ չէ: Այն Kinodaran-ի՝ հայկական ֆիլմարտադրության մեջ որակի նոր կանոններ սահմանելու առաջին փորձն է»,-նշում է Kinodaran-ի գլխավոր պրոդյուսեր Ռաֆայել Թադեւոսյանը:



ԿՈՆՑԵՐՏ՝ ՀԻՄՆՎԱԾ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏՅԱՆ...»-Ի ՎՐԱ

Անվանի ռուս կոմպոզիտոր Սերգեյ Եկիմովի «Արեգակն արդար» երգչախմբային կոնցերտը, որի հիմքում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագիրքն է, առաջին անգամ կհնչի Երեւանում: Համերգային երեկոն տեղի կունենա սեպտեմբերի 14-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Կոնցերտը բացառիկ է նրանով, որ գրված է Նարեկացու աղոթագրքի գրաբար տեքստի հիման վրա: «Արեգակն արդար» երգչախմբային կոնցերտը կհնչի «Նիժնի Նովգորոդ» կամերային երգչախմբի կատարմամբ: Այն կղեկավարի երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Իվան Ստոլնիկովը: Համերգին կհնչեն նաեւ Սերգեյ Եկիմովի «Այն խոսքը, որով կդատապարտես ինձ» երգչախմբային կոնցերտը՝ ըստ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի՝ Նաում Գրեբնեւի ռուսերեն թարգմանությամբ (հայաստանյան պրեմիերա), ինչպես նաեւ հեղինակի երգչախմբային երեք մանրերգեր՝ ըստ Իոսիֆ Բրոդսկու բանաստեղծությունների եւ երգչախմբային կոնցերտ՝ ըստ Աննա Ախմատովայի բանաստեղծությունների: Համերգին կատարելու են նաեւ Կոմիտասի մի շարք խմբերգեր, կկայանա ժամանակակից կոմպոզիտոր Արթուր Ավանեսովի «Որտեղի՞ց այսքան քնքշանք» երգչախմբային ստեղծագործության համաշխարհային պրեմիերան՝ գրված Մարինա Ցվետաեւայի բանաստեղծության հիման վրա: Սեպտեմբերի 13-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում դիրիժոր Իվան Ստոլնիկովը կանցկացնի երգչախմբային արվեստի վարպետության դաս: Մուտքն ազատ է: Համերգը կազմակերպել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի աջակցությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՄԱԿԵԴՈՆԻԱ ԽԱՂԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմն Ազգերի լիգայի (C 4 ենթախումբ) երկրորդ տուրում մրցեց Հյուսիսային Մակեդոնիայի հետ:

Հանդիպման մեկնարկային րոպեներին Հայաստանի ազգային թիմը բավականին վստահ էր գործում, սակայն Հյուսիսային Մակեդոնիան էլ առավել վտանգավոր էր գրոհում: Հանդիպման առաջին կեսի վերջնամասում Հայաստանի ազգային թիմում տեւական ժամանակ տիրում էր նախաձեռնությունն ու գրոհները հաջորդում էին մեկը մյուսին, սակայն տանտերերը՝ հյուսիսմակեդոնացիները, հստակ էին գործում պաշտպանությունում: Առաջին կեսի վերջին րոպեին Հյուսիսային Մակեդոնիան մնաց 10 ֆուտբոլիստով: Կարմիր քարտ ստացավ Ջայկովը: Երկրորդ կեսի 70-րդ րոպեին Հյուսիսային Մակեդոնիան օգտագործեց ստանդարտ դիրքը եւ առաջ անցավ հաշվի մեջ: Դիպուկ հարվածով աչքի ընկավ Բարդին: Տանտերերը շարունակեցին զարգացնել հաջողությունը եւ, լինելով 10 ֆուտբոլիստով, խփեցին նաեւ երկրորդ գնդակը: Գոլն իր ակտիվում գրանցեց Միովսկին:

Հյուսիսային Մակեդոնիա-Հայաստան՝ 2:0:

Հայաստանի ֆուտբոլի ազգային ընտրանին Ազգերի լիգայի շրջանակներում հաջորդ հանդիպումը կանցկացնի հոկտեմբերի 10-ին՝ հյուրընկալվելով Ֆարերյան կղզիներ, իսկ հոկտեմբերի 13-ին Երեւանում կխաղա Հյուսիսային Մակեդոնիայի հետ:

ՄԱՐԶԱՁԵՎԵՐԸ ԿՆԵՐԱՌՎԵՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՂՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

Կառավարությունը առաջարկում է կարատեն, քիք-բոքսինգը եւ մուայթայը ընդգրկել պարգեւատրվող մարզաձեւերի ցանկում:

Ազգային ժողովի նիստում համապատասխան նախագիծը ներկայացրեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

«Առաջարկում ենք մի քանի մարզաձեւեր մտցնել պարգեւատրվող մարզաձեւերի ցանկ, որովհետեւ դրանք Միջազգային օլիմպիական կոմիտեի կողմից ճանաչվել են որպես օլիմպիական ընտանիքի անդամ մարզաձեւեր: Դրանք են՝ կարատե, քիք-բոքսինգ, մուայթայ մարզաձեւերը»,- ասաց Գիլոյանը:

«Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի համապատասխան կետում, որտեղ ներկայացված են այն մարզաձեւերը, որոնք ներկայացնող մարզիկները, մարզիչներն ու բժիշկները, նույն կետում բերված միջոցառումներում 1-3-րդ տեղերը գրավելու համար պետության կողմից պարգեւատրվում են դրամական պարգեւներով, կավելացվեն կարատե, քիք-բոքսինգ, մուայթայ մարզաձեւերը:

● *Սեպտեմբերի 14-ին՝ 19:00 -ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կբեմադրվի «Զավեշտալի կատակերգություն հյուրանոցում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Հայկ Ստեփանյան (33 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչ է հողամասի կառուցապատման իրավունքը:

Ռոման Գրիգորյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հողի տիրապետումը, օգտագործումը եւ տնօրինումը չպետք է վնաս պատճառի շրջակա բնական միջավայրին, երկրի պաշտպանունակությանն ու անվտանգությանը, չպետք է խախտի քաղաքացիների եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկվանից Հայաստանում ընթանում է «Հնդկաստանը Հայաստանում եւ Հայաստանը Հնդկաստանում» երկօրյա միջազգային համաժողովը, որի ընթացքում քննարկվում են երկու երկրների պատմամշակութային հարաբերությունները ու արվեստի բնագավառում առկա հարուստ ժառանգությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Գիշեր / Ցերեկ
Շիրակ	+8 + 11 / +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 / +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 / +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 / +23 + 28
Լոռի	+9 + 14 / +23 + 27
Տավուշ	+12 + 17 / +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 / +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15 + 18 / +27 + 31
Արարատ	+17 + 20 / +33 + 35
Արմավիր	+15 + 18 / +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+9 + 11 / +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 / +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 / +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 / +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 / +27 + 31
Երեւան	+24 + 26 / +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.9.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*